ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 11.02.2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ՝ ««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

12.02.2017 04:52

11.02.2017թ. տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի **հերթական ընդհանուր ժողովը**, որի օրակարգում ընդգրկված է եղել երեք հարց՝

- **ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.**
- **ՀՀ փաստաբանների պալատի *կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն.***
- ***«Փաստաբանի օր» սահմանելու մասին հարց.***

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովն ամփոփել է «Փաստաբանի օր» սահմանելու մասին օրակարգային հարցով ընդհանուր ժողովի արդյունքները:

Ընդհանուր ժողովի քվեաթերթիկում որպես «Փաստաբանի օր» սահմանելու **տարբերակներ** ներկայացված են եղել հունիսի 2-ը, հունիսի 11-ը, հունիսի 18-ը, նոյեմբերի 9-ը, դեկտեմբերի 6-ը և դեկտեմբերի 14-ը:

ՀՀ փաստաբանների պալատի **կանոնադրության** համաձայն սույն օրակարգային հարցով ընդհանուր ժողովը կարող էր կայացած համարվել և «Փաստաբանի օր» սահմանվել, եթե ներկայացված տարբերակներից որևէ մեկի օգտին քվեարկեր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող փաստաբանների ընդհանուր թվի պարզ մեծամասնությունը:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի 11.02.2017թ. թիվ 1 արձանագրության ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել 1780 փաստաբան, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների՝ քվեաթերթիկ են ստացել 1163 փաստաբան, սակայն «Փաստաբանի օրվա» ներկայացված տարբերակներից առավելագույն ձայներ ստացած առաջարկի՝ հունիսի 2-ի օգտին քվեարկել են 298 փաստաբան, ինչը չի բավարարել նշված տարբերակը կանոնադրության համաձայն որպես «Փաստաբանի օր» ընդունված համարելու համար:

Վերոնշյալի հաշվառմամբ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովը 12.02.2017 թվականին ընդունված թիվ Լ-1-Ա որոշմամբ ճանաչել է ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկությունը չկայացած, ինչի արդյունքում «Փաստաբանի օր» չի սահմանվել:

Բեռնել ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի՝ ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով 11.02.2017թ. թիվ 1 արձանագրությունը

Բեռնել ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի՝ ««Փաստաբանի օր» սահմանելու մասին» օրակարգային հարցով 11.02.2017թ. թիվ 2 արձանագրությունը

Բեռնել ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի՝ ««Փաստաբանի օր» սահմանելու հարցը քննարկելու մասին» օրակարգային հարցով քվեարկության արդյունքների մասին 12.02.2017թ. թիվ Լ-1-Ա որոշումը

Առաջարկվող նորություններ

23.10.2013«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ»

08.04.2015««ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ 2015թ. ԱՊՐԻԼԻ 25-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ

22.12.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ
(ԱՄՍԱԹՎԵՐԸ)

12.01.2017ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })